ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Փրայմ Կապիտալ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության միակ հիմնադիր
մասնակցի «24» հոկտեմբերի 2019թ., թիվ 33 որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է
«Փրայմ Կապիտալ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության միակ հիմնադիր
մասնակցի «22» մայիսի 2023թ., թիվ 56 որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է
«Փրայմ Կապիտալ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության միակ հիմնադիր
մասնակցի «26» ապրիլի 2024թ., թիվ 61 որոշմամբ

Միակ հիմնադիր մասնակից՝

Ներսես Սարինյան

(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

(ստորագրություն)

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.05.31 12:53:35 AMT
Reason: Գրանցած է 29.05.2024թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Asya Khalatyan

Digitally signed by Asya Khalatyan
Date: 2024.05.06 15:31:56 +04'00'

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին և գործող այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. Ընկերությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից:

1.3. Ընկերության մասնակիցների ավանդները, դրանց հաշվին ստեղծված, ինչպես նաև Ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքն Ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով, և Ընկերությունն ազատ է իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք:

1.4. Ընկերության մասնակիցների ավանդների արժեքից կազմվում է կանոնադրական կապիտալ, որը սահմանում է Ընկերության պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

1.5. Ընկերությունն ունի իր մասնակիցների գույքից առանձնացված գույք: Ընկերության գույքը և պարտավորությունները հաշվի են առնվում ինքնուրույն հաշվեկշռում: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.6. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, իսկ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության կամ համայնքների պարտավորությունների համար:

1.7. Ընկերությունն իրավունք ունի սահմանված կարգով դրամական, արժեթղթերի և այլ հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում և դեպոզիտարիաներում:

1.8. Ընկերությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

1.9. Ընկերությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ինչպես նաև կարող է ունենալ դրոշմներ և ձևաթղթեր, օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.10. Ընկերությունը կարող է լինել մեկ այլ ընկերության կամ ընկերակցության մասնակից (հիմնադիր), ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետությունում և այլ պետությունների տարածքում՝ գրանցման վայրում գործող օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

1.11. Ընկերության ֆիրմային անվանումն է.
հայերեն՝ «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
անգլերեն՝ «Prime Capital» Limited Liability Company,
ռուսերեն՝ Общество с ограниченной ответственностью «Прайм Капитал» :

1.12. Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի փողոց, 7 շենք:

1.13. Ընկերության գործունեության վայրն է՝ ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի փողոց, 7 շենք:

1.14. Ընկերությունը գործունեություն է իրականացնում բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիայով և թույլտվությամբ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թույլտվության հիման վրա Ընկերությունը կարող է նաև իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթերի փաթեթի կառավարում: Ընկերության գործունեության տևողությունը չի սահմանափակվում:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ներդրումային ֆոնդերի կառավարման ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ներդրումային ֆոնդերի կառավարումը ներառում է.

2.2.1. ներդրումների կառավարում, որը ենթադրում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում,

2.2.2. կառավարչական գործառույթներ՝

2.2.2.1. փայերի թողարկման և հետգնման (մարման) կազմակերպում,

2.2.2.2. ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական և հաշվառման գործառույթներ,

2.2.2.3. ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և փայերի տեղաբաշխման ու հետգնման հաշվարկային արժեքների հաշվարկում,

2.2.2.4. ֆոնդի մասնակիցների ռեեստրի վարում,

2.2.2.5. ֆոնդի մասնակիցներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,

2.2.2.6. կառավարչական այլ գործառույթներ:

2.3. «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **52 000 000** (հիսուներկու միլիոն) ՀՀ դրամ, 1 (մեկ) բաժնեմասի անվանական արժեքը՝ 650 (վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Կանոնադրական կապիտալը Ընկերության մասնակիցների միջև բաշխված է հետևյալ կերպ.

Ներսես Սարինյան (անձնագիր՝ AU0255819, տրված՝ 05.05.2021թ, 004-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պողոտա, 3, բն. 9)՝ 100% (մեկ հարյուր տոկոս) բաժնեմասի փայամասնակցությամբ:

3.2. Ընկերության մասնակիցները (հիմնադիրները) պարտավոր են ամբողջությամբ ներդնել իրենց ավանդները կանոնադրական կապիտալում Ընկերության պետական գրանցման պահից մեկ տարվա ընթացքում:

3.3. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակիցների կամ ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ոչ դրամային ավանդներ ներդնելու դեպքում

դրանց դրամական գնահատականը կատարվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից միաձայն կարգով:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը չի կարող պակաս լինել գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն արժեքից:

3.4. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն այն ամբողջությամբ վճարելուց հետո:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել Ընկերության գույքի հաշվին, մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին կամ Ընկերության մեջ ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին:

Ընկերության գույքի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում համապատասխանորեն մեծանում է նաև մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը՝ անփոփոխ թողնելով դրանց չափը:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը նրա մասնակիցների լրացուցիչ ավանդների և Ընկերություն ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ընկերության մասնակցի դիմումի հիման վրա այդ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշում ընդունվում է Ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն:

3.5. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումն իրականացվում է Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:

Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքում մասնակիցների բաժնեմասերի չափերը չեն փոխվում:

Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո Ընկերությունը պարտավոր է 30 օրվա ընթացքում այդ մասին և կանոնադրական կապիտալի նոր չափի մասին գրավոր տեղեկացնել իրեն հայտնի Ընկերության բոլոր պարտատերերին: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն գրավոր տեղեկացումը ստանալու պահից 30 օրվա ընթացքում, պահանջել իրենց նկատմամբ Ընկերության պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև իրենց վնասների հատուցում:

3.6. Ընկերության պետական գրանցումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կանոնադրական կապիտալն ամբողջությամբ չվճարելու դեպքում Ընկերությունը պարտավոր է նվազեցնել կանոնադրական կապիտալը մինչև փաստացի վճարված չափը կամ որոշում ընդունել Ընկերության լուծարման մասին:

3.7. Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը: Եթե Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, Ընկերությունը ենթակա է լուծարման:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

4.1. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) կանոնադրական կապիտալի 20 տոկոսի չափով, որը ստեղծվում է Ընկերության շահույթից մասհանումների, ինչպես նաև բաժնեմասի անվանական արժեքի և բաժնեմասի դիմաց վճարված գումարի տարբերության (էմիսիոն եկամտի) հաշվին:

4.2. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է 4.1. կետում նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 3 տոկոսի չափով, ինչպես նաև էմիսիոն եկամտի միջոցներից:

4.3. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու համար, եթե Ընկերության շահույթն այդ նպատակին չի բավարարում:

4.4. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼԸ

5.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, իսկ բոլոր մասնակիցների համաձայնության դեպքում՝ վաճառել կամ այլ ձևով օտարել երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

5.2. Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, բացառությամբ՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքի:

Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Ընկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին 5 օրվա ընթացքում գրավոր հայտնում է Ընկերության մյուս մասնակիցներին: Այն դեպքում, երբ Ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից 1 ամսվա ընթացքում չեն օգտվում բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձի՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել է նրա մասնակիցներին:

5.3. Ընկերության մասնակիցն իրավունք ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

5.4. Բաժնեմասի օտարումն իրականացվում է պարզ գրավոր ձևով ձևակերպված համապատասխան պայմանագրով (ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վավերացված նոտարական կարգով):

5.5. Բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են Ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքները և պարտականությունները:

5.6. Ընկերության մասնակցի մահվան (վերակազմակերպման) ժամանակ կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասն անցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին):

Ժառանգների (իրավահաջորդների)՝ Ընկերության մասնակից դառնալուց հրաժարվելու դեպքում, Ընկերությունը պարտավոր է նրանց վճարել համապատասխան բաժնեմասը սույն Կանոնադրության 9.2. կետով սահմանված կարգով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ ԿԱՄ ԲՌՆԱԳՐԱՎԵԼԸ

6.1. Ընկերության մասնակցի պարտքերի համար պարտատերերի պահանջով նրա բաժնեմասի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում՝ դատարանի վճռի հիման վրա:

6.2. Ընկերության մասնակցի բաժնեմասը կարող է բռնագրավվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

6.3. Ընկերության մասնակցի բաժնեմասի բռնագանձումը կամ բռնագրավումն իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

6.4. Ընկերության գույքում մասնակցի ամբողջ մասի վրա բռնագանձում տարածելը կամ բաժնեմասն ամբողջությամբ բռնագրավելը դադարեցնում է նրա մասնակցությունն ընկերությանը:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

7.1. Ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք:

7.2. Ընկերության մասնակիցներ (հիմնադիրներ) կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն Ընկերության մասնակից (հիմնադիր) չեն կարող լինել:

7.4. Մեկ մասնակից ունենալու (մնալու) դեպքում Ընկերության միակ մասնակիցն իրականացնում է գործող օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ Ընկերության մասնակիցներին վերապահված իրավունքները և պարտականությունները:

7.5. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:

7.6. Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն.

8.1.1. մասնակցել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի ձայնի իրավունքով,

8.1.2. մասնակցել Ընկերության կառավարմանը,

8.1.3. հաստատել Ընկերության հաստիքացուցակը և վարչակազմակերպական կառուցվածքը,

8.1.4. տեղեկություններ ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ,

8.1.5. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը,

8.1.6. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

8.1.7. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց,

8.1.8. անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից՝ ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից,

8.1.9. Ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ Ընկերության մնացած գույքից,

8.1.10. Օրենքով սահմանված կարգով գրավ դնել Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը:

8.2. Ընկերության մասնակիցները պարտավոր են.

8.2.1. Ներդրումներ կատարել Ընկերության կանոնադրական կապիտալում՝ Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով, չափերով և ժամկետներում,

8.2.2. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից,

8.2.3. իր գործողություններով չխոչընդոտել Ընկերության բնականոն գործունեությանը,

8.2.4. ժամանակին կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

8.2.5. Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասի իրավունքը գրավ դնելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Ընկերությանը,

8.2.6. ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

9. ՄԱՍՆԱԿՑԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

9.1. Ընկերության մասնակիցը, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ Ընկերությունից:

9.2. Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է դուրս գալու դիմումը ներկաայցնելու պահից՝ 6 (վեց) ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը, որը որոշվում է Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա: Դուրս եկող մասնակցի և Ընկերության համաձայնությամբ դուրս եկող մասնակցին կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք:

9.3. Եթե Ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներ դրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա համապատասխան գույքը վերադարձվում է Ընկերությունից դուրս եկող մասնակցին: Նման գույքի բնականոն մաշվածության հետևանքով նվազած արժեքը չի հատուցվում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼԸ

10.1. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10% բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:

10.2. Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերությանը: Ընկերությունը հեռացված մասնակցին վճարում է նրա բաժնեմասի արժեքը, որը որոշվում է սույն Կանոնադրության 9.2. կետով սահմանված կարգով:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ

11.1. Ընկերության պատկանող բաժնեմասերը հաշվի չեն առնվում մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս, ինչպես նաև Ընկերության լուծարման դեպքում գույքը բաշխելիս:

11.2. Ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն Ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում մասնակիցների ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ պետք է բաշխվի Ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ նրանց բաժնեմասերին համապատասխան, կամ Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, կամ երրորդ անձանց, և ամբողջությամբ վճարվի:

Բաժնեմասի չբաշխված մասը պետք է մարվի Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով:

12. ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ

12.1. Ընկերությունն իրավունք ունի Ընդհանուր ժողովի որոշմամբ իրականացնել շահույթի բաշխումն իր մասնակիցների միջև՝ եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժիններ վճարելու միջոցով: Միջանկյալ շահութաբաժինների վերաբերյալ մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշումն ընդունվում է տվյալ ժամանակահատվածի ավարտից հետո եռամսյա ժամկետում՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է Ընկերության մասնակիցների միջև՝ ըստ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

12.2. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել շահույթի բաշխման մասին կամ Ընկերության մասնակիցներին վճարել շահույթ, որի բաշխման մասին որոշումն արդեն ընդունված է՝

12.2.1. մինչև ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը,

12.2.2. եթե որոշման ընդունման պահին Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից և պահուստային հիմնադրամից կամ այդ չափից փոքր կդառնա որոշման ընդունման արդյունքում,

12.2.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը (իրավասու կառավարման մարմին) նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով), որն ունի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության մեկ անձի կողմից հիմնադրվելու (մեկ մասնակից մնալու) դեպքում Ընդհանուր Ժողովի իրավասություններն իրականացնում է Ընկերության միակ մասնակիցը:

13.2. Ընկերության Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

13.2.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

13.2.2. Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (կառավարիչ) տալու հարցերը,

13.2.3. Ընկերության կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

13.2.4. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,

13.2.5. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

13.2.6. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրելիության հարցի և վարձատրության պայմանների որոշումը, այդ թվում՝ սահմանել պարգևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ,

13.2.7. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

13.2.8. Ընկերության շահույթը բաշխելու մասին որոշումն ընդունելը,

13.2.9. այլ ընկերությունների կամ կազմակերպությունների մասնակից (հիմնադիր) լինելու մասին որոշման ընդունումը,

13.2.10. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը, վերակազմակերպումը, լուծարումը,

13.2.11. Ընկերության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումը,

13.2.12. Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը),

13.2.13. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը,

13.2.14. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,

13.2.15. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վարձատրության որոշման ընդունումը,

13.2.16. Ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշումների ընդունումը,

13.2.17. լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը,

13.2.18. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

13.3. Կանոնադրության 13.2. կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության տնօրենների խորհրդին կամ գործադիր տնօրենին:

13.4. Հերթական Ընդհանուր ժողովն անցկացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական Ընդհանուր Ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են

արտահերթ: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր մարմինը: Արտահերթ Ընդհանուր Ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար: Արտահերթ ընդհանուր ժողովները հրավիրվում են Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի կամ բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի պահանջով:

13.5. Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատվում են Ընկերության հերթական Ընդհանուր Ժողովում, որն անցկացվում է ֆինանսական տարվա ավարտից ավարտից ոչ շուտ, քան 2 ամիս և ոչ ուշ, քան 6 ամիս անց:

13.6. Հերթական և արտահերթ Ընդհանուր Ժողովների հրավիրման կարգը, այդ թվում՝ ժողովի մասին Ընկերության մասնակիցներին ծանուցելու կարգը, ծանուցման ժամկետը, ինչպես նաև՝ ժողովի օրակարգին վերաբերվող նյութերի և տեղեկատվության՝ մասնակիցներին տրամադրելու կարգերը սահմանվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ:

13.7. Ընդհանուր Ժողովի բացումից առաջ կատարվում է Ընկերության ժամանած մասնակիցների գրանցում: Ընկերության չգրանցված մասնակիցը (մասնակցի ներկայացուցիչը) իրավասու չէ մասնակցել քվեարկությանը:

13.8. Ընդհանուր ժողովը բացվում է ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման մեջ նշված ժամին կամ, եթե ընկերության բոլոր մասնակիցներն արդեն գրանցվել են, ավելի վաղ:

13.9. Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է Ընդհանուր Ժողովի արձանագրության վարումը:

Ընկերության մասնակիցն Ընդհանուր Ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Մասնակցի ներկայացուցիչը կարող է մասնակցել Ընկերության Ընդհանուր Ժողովին միայն օրենքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագրի առկայության դեպքում: Մասնակիցը պահպանում է Ընկերության Ընդհանուր Ժողովում մասնակցելու առաջնային իրավունքը՝ անկախ իր կողմից ներկայացուցչին տրված լիազորագրից:

13.10. Ընդհանուր ժողովի որոշումը կարող է ընդունվել առանց ժողով անցկացնելու (առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա գտնվելու)՝ անցկացնելով հեռակա քվեարկություն (հարցման միջոցով): Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և

ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

13.11. Ընկերության Ընդհանուր Ժողովում սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև՝ Կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների հաստատման, կանոնադրական կապիտալի փոփոխման, ինչպես նաև Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են բոլոր մասնակիցների մասնակցությամբ՝ միաձայն, մնացած հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ, եթե «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով կամ սույն Կանոնադրությամբ տվյալ որոշման ընդունման համար նախատեսված չէ ձայների ավելի մեծ քանակ:

13.12. Ընդհանուր Ժողովի նիստերի անցկացման վերաբերյալ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված որոշ դրույթներ կիրառելի չեն լինում, եթե ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ որոշումները ընդունվում են ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ:

13.13. Ընկերության Ընդհանուր Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ընկերության մասնակից չհանդիսացող Ընկերության տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

13.14. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Տնօրենների Խորհուրդ կամ Խորհուրդ), բացառությամբ այն հարցերի, որոնք «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով և սույն Կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը:

13.15. Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում.

13.15.1. ֆոնդի ստեղծման և (կամ) դրա կառավարման մասին որոշման կայացում,

13.15.2. Ընկերության ստեղծած կամ նրա կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի կանոնների և դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների հաստատումը,

13.15.3. Ընկերության՝ որպես ֆոնդի նոր կառավարիչ հանդես գալու դեպքում այդ ֆոնդի կանոնների ընդունումը,

13.15.4. Ընկերության ստեղծած (նրա կողմից կառավարվող) պայմանագրային ֆոնդի պահառության պայմանագրի կնքման և դրա գործողության դադարեցման, ինչպես նաև պահառության պայմանագրի՝ պահառուի հետ փոխհամաձայնեցված փոփոխության մասին որոշման կայացումը,

13.15.5. Ընկերության կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի միացման և դադարեցան մասին որոշումների կայացումը,

13.15.6. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ֆոնդի կառավարման պայմանագրից միակողմանի հրաժարման մասին որոշման կայացումը,

13.15.7. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կորպորատիվ ֆոնդի ժողովի իրավասությանը վերապահված հարցերով, այն է՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆոնդի պահառության և ֆոնդի կառավարման պայմանագրերի փոփոխման և գործողության դադարեցման և նոր կառավարչի և պահառուի հետ ֆոնդի պահառության և ֆոնդի կառավարման պայմանագրերի կնքման մասին որոշման կայացման, ֆոնդի կանոնադրության փոփոխությունների և (կամ) լրացումների հաստատման, ֆոնդի վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների կայացման, ինչպես նաև լուծարման հանձնաժողովի նշանակման և միջանկյալ ու լուծարային հաշվեկշիռների հաստատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը Ընկերության կողմից կառավարվող ֆոնդի ժողով,

13.15.8. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և (կամ) ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) Ընկերության կողմից կառավարվող ֆոնդի ժողովի իրավասությանը վերապահված հարցերով ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) առնվազն երկու տոկոսի սեփականատեր ֆոնդի մասնակցի (մասնակիցների)՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ այդ օրենքով սահմանված կարգով որոշման կայացումը և ֆոնդի ժողովի օրակարգի հաստատումը,

13.15.9. Ընկերության ներքին աուդիտորի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ներքին աուդիտորի տարեկան ծրագրի հաստատումը,

13.15.10. Ընկերության արտաքին աուդիտի հրավիրման որոշման կայացում և Ընդհանուր Ժողովին արտաքին աուդիտ իրականացնող անձի ընտրության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

13.15.11. Ընկերության գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի հաստատումը,

13.15.12. Ընկերության գործարար ծրագրի հաստատումը,

13.15.13. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

13.16. Սույն Կանոնադրության 13.15. կետով նախատեսված Տնօրենների Խորհրդի իրավասությունները բացառիկ են և չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր տնօրենի իրավասությանը:

13.17. Տնօրենների Խորհուրդը բաղկացած է նվազագույնը 3 (երեք) անդամներից: Տնօրենների Խորհրդի անդամների քանակը հաստատվում է Ընդհանուր Ժողովի կողմից: Տնօրենների Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Տնօրենների Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Տնօրենների Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

13.18. Ընդհանուր Ժողովը կարող է որոշում ընդունել Տնօրենների Խորհրդի ցանկացած անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

13.19. Տնօրենների Խորհրդի նախագահին ընտրում են Տնօրենների Խորհրդի անդամները, Տնօրենների Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

13.20. Տնօրենների Խորհրդում կարող են ընդգրկվել Ընկերության կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի ընտրած մեկական ներկայացուցիչ (բացառությամբ այն ֆոնդերի, որոնց կանոններով (կանոնադրությամբ) սահմանված է, որ այդպիսի ներկայացուցիչ չի ընտրվում, ինչպես նաև այն պայմանագրային ֆոնդերի, որոնցում ֆոնդի ժողով գումարվում), որոնք Տնօրենների Խորհրդի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով, բացառությամբ, եթե դրանցում լուծվում են այն ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցեր, որի ներկայացուցիչն է Տնօրենների Խորհրդի տվյալ անդամը: Այդպիսի նիստերին վերջինս մասնակցում է Տնօրենների Խորհրդի մյուս լիարժեք անդամներին հավասար ձայնի իրավունքով: Ընկերության Տնօրենների Խորհուրդը կարող է որոշում ընդունել Խորհրդի նիստին (դրա որոշակի մասին) սույն մասով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությունը սահմանափակելու վերաբերյալ, եթե դրանում բացահայտվելու են կառավարչի (Ընկերության) համար առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ: Ընդ որում, Ընկերության Տնօրենների Խորհրդում համապատասխան ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների բացակայությամբ չի կարող որոշում ընդունվել տվյալ ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցերի վերաբերյալ, եթե այդպիսի բացակայությունը պայմանավորված է սույն մասով նախատեսված մասնակցության սահմանափակումը կիրառելու մասին խորհրդի որոշմամբ: Սույն մասով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների վարձատրությունն իրականացվում է համապատասխան ֆոնդի միջոցների հաշվին՝ ֆոնդի ժողովի սահմանած պայմաններով:

13.21. Տնօրենների Խորհրդի նիստերը գումարում է Տնօրենների Խորհրդի նախագահն իր նախաձեռնությամբ՝ Տնօրենների Խորհրդի անդամի, ներքին կամ արտաքին աուդիտի, գործադիր տնօրենի պահանջով:

13.22. Տնօրենների Խորհրդի նիստերում նախագահում է Տնօրենների Խորհրդի նախագահը: Տնօրենների Խորհրդի նախագահի բացակայության, Խորհրդի նիստին չներկայանալու դեպքերում նրա պարտականությունները կատարում է, Խորհրդի նիստը նախագահում է Խորհրդի անդամներից տարիքով ավագը:

13.23. Տնօրենների Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են Տնօրենների Խորհրդի անդամների 2/3-ը:

13.24. Տնօրենների Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրենների Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Տնօրենների Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը երրորդ անձանց կամ Խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում: Տնօրենների Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք: Տնօրենների Խորհրդի անդամը քվեարակում է «Կողմ» կամ «Դեմ» և չի կարող քվերակել «Ձեռնպահ»:

13.25. Տնօրենների Խորհրդի անդամների թիվը 3-ից նվազելու դեպքում Ընկերությունը այն լրացնելու նպատակով գումարում է Արտահերթ Ընդհանուր Ժողով:

13.26. Տնօրենների Խորհրդի նիստի օրակարգը հաստատում է Տնօրենների Խորհրդի նախագահը՝ հիմք ընդունելով նիստին գումարման պահանջ ներկայացրած անձի առաջարկը, ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները:

13.27. Տնօրենների Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով կամ Խորհրդի որոշ անդամներ՝ հեռակա, իսկ որոշները՝ առկա կարգով միաժամանակ, որի դեպքում Խորհրդի անդամների նկատմամբ կիրառվում են սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգը:

13.28. Հեռակա կարգով նիստերը գումարվում են Տնօրենների Խորհրդի նախագահի կողմից հաստատված քվեաթերթիկների միջոցով կամ էլեկտրոնային քվերակությամբ: Հեռակա կարգով նիստ անցկացնելիս նիստի վերաբերյալ ծանուցումը՝ կից նյութերով և քվեաթերթիկներով, Խորհրդի նախագահը էլեկտրոնային փոստով կամ առձեռն կամ պատվիրված նամակով ներկայացնում է Տնօրենների Խորհրդի անդամներին՝ հաստատված քվեաթերթիկները Տնօրենների Խորհրդի անդամներից ընդունելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

13.29. Տնօրենների Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Տնօրենների Խորհրդի անդամները հաղորդակցվում են միմյանց հետ

հեռախոսային կապի միջոցով կամ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացվող նիստ չի համարվում:

13.30. Տնօրենների Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստից հետո 5 օրյա ժամկետում: Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցած Խորհրդի բոլոր անդամները, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկատվության ճշտության և հավաստիության համար:

13.31. Հեռակա կարգով անցկացվող Տնօրենների Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է օրակարգի հարցերի վերաբերյալ քվեարկությունների հիման վրա:

13.32. Տնօրենների Խորհրդի բոլոր արձանագրություններում նշվում են՝

13.32.1. արձանագրության հերթական համարը,

13.32.2. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը,

13.32.3. նիստին մասնակցած անձինք,

13.32.4. նիստի օրակարգը,

13.32.5. քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի,

13.32.6. քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,

13.32.7. նիստի ընթացքում ընդունված որոշումները:

13.33. Ընկերության Ընդհանուր Ժողովի կողմից ընթացիկ գործերի ղեկավարման համար նշանակվում է գործադիր մարմինը՝ Ընկերության գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գործադիր Տնօրեն):

Ընկերության և Գործադիր Տնօրենի միջև կնքվում է պայմանագիր, որը սահմանում է Գործադիր Տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, փոխհարաբերությունները մասնակիցների և աշխատավորական կոլեկտիվի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի ժամկետը, պայմանագրի դադարեցման և լուծման հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ են և չեն հակասում գործող օրենսդրությանը:

Ընկերության Գործադիր Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

13.34. Ընկերության Գործադիր Տնօրենը՝

13.34.1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,

13.34.2. կազմակերպում է Ընդհանուր Ժողովի որոշումների կատարումը,

13.34.3. Ընդհանուր Ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության հաստիքացուցակը,

13.34.4. մշակում է Ընկերության քաղաքականությունները, ռազմավարությունը, նպատակները, գործարար ծրագրերը և ներկայացնում խորհրդի հաստատմանը,

13.34.5. առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը, պաշտպանում իրավունքները ՀՀ տարածքում գործող բոլոր ատյաններում, կազմակերպություններում, հաստատություններում (մասնավոր, թե պետական),

13.34.6. Ընկերության անունից հանդես է գալիս որպես հայցվոր և պատասխանող,

13.34.7. տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

13.34.8. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է համաձայնագրեր, պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

13.34.9. ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս գործող բանկերում բացում է Ընկերության բանկային և այլ հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային հաշիվներ,

13.34.10. Ընկերության Ընդհանուր Ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, ներքին այլ կանոնակարգերը, Ընկերության հաստիքացուցակը, Ընկերության ստորաբաժանումների, հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը,

13.34.11. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգեր, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

13.34.12. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատակիցներին,

13.34.13. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցառումներ,

13.34.14. իրականացնում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքով և (կամ) սույն Կանոնադրությամբ Ընդհանուր Ժողովի իրավասությանը չվերապահված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված, նաև չնախատեսված այլ իրավունքներ:

13.35. Ընկերության Գործադիր Տնօրենն իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնել:

13.36. Ընկերության Գործադիր Տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Ընդհանուր Ժողովի համաձայնությամբ:

13.37. Ընկերության Գործադիր Տնօրենն իր գործունեության մասին հաշվետու է Տնօրենների Խորհրդին և Ընդհանուր Ժողովին:

13.38. Ընկերության Գործադիր Տնօրենի գործողությունների հետևանքով Ընկերությանը պատճառված վնասի հատուցման և դրա պատասխանատվությունից ազատման հարաբերությունները կարգավորվում են Ընկերության և Գործադիր Տնօրենի միջև կնքված պայմանագրով:

13.39. Ընդհանուր Ժողովի կողմից Գործադիր Տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

13.39.1. նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

13.39.2. նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Գործադիր Տնօրեն (Ընկերության ղեկավար),

13.39.3. նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1. Ընկերությունը պարտավոր է ունենալ համապատասխան ներքին հսկողության համակարգ, որը կներառի Ընկերության կառավարման գործունեության բոլոր մակարդակները: Այդ նպատակի իրագործման համար Ընկերությունը պարտավոր է ունենալ իր այլ գործառնական ստորաբաժանումներից անկախ ներքին աուդիտի ստորաբաժանում (այսուհետ՝ ներքին աուդիտ), նշանակել իր գործառնական ստորաբաժանումներից և դրանց աշխատակիցներից անկախ աշխատակիցներ կամ ներքին աուդիտի գործառույթները պայմանագրով պատվիրակել անկախ աուդիտորին:

14.2. Ներքին աուդիտի գործունեության կարգը սահմանվում է տնօրենների խորհրդի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ «Ներքին աուդիտի» կանոնակարգով:

14.3. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները (այսուհետ՝ ներքին աուդիտորներ) պետք է բավարարեն կառավարչի ղեկավարների նկատմամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և Ընկերության «Ղեկավարների և աշխատակիցների որակավորման և մասնագիտական չափանիշների սահմանման և գրանցման» կանոնարգով սահմանված պահանջներին:

14.4. Ներքին աուդիտոր չի կարող լինել կառավարչի կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև կառավարչի ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը: Ներքին աուդիտոր կարող է լինել միայն համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձը:

14.5. Ընկերության ներքին աուդիտորը նշանակվում է տնօրենների խորհրդի կողմից, իր իրավասություններն իրականացնելիս անկախ է և հաշվետու է Տնօրենների Խորհրդին:

14.6. Ներքին աուդիտորի հիմնականան գործառույթներն են.

14.6.1. հսկողություն իրականացնել Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,

14.6.2. ստուգել Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքներով, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, սույն Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին,

14.6.3. իրականացնել պարբերաբար մշտադիտարկումներ, ինչպես նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքերի եռամսյակային և տարեկան ստուգում՝ վերանայելով Ֆինանսական կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները,

14.6.4. ներկայացնել եզրակացություններ Ընկերության գործունեության համապատասխանության վերաբերյալ և առաջարկություններ՝ Տնօրենների Խորհրդի կողմից ներկայացրած այլ հարցերի վերաբերյալ:

14.6.5. օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ դրույթներ:

14.7. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

14.8. Յուրաքանչյուր տարի Տնօրենների Խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, որն առնվազն ներառում է՝

14.8.1. այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում,

14.8.2. առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:

14.9. Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է ապահովել բավարար պայմաններ ներքին աուդիտի իրավասությունների արդյունավետ իրականացման համար:

14.10. Ներքին աուդիտը պարտավոր է Ընկերության կողմից օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև ֆոնդի մասնակիցների և (կամ) հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին դրանց հայտնաբերման պահից 5 աշխատանքային օրվա

ընթացքում հայտնել Ընկերության Տնօրենների Խորհրդին, Գործադիր Տնօրենին և Կենտրոնական բանկին:

14.11. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտորական ստուգման՝ անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից (արտաքին աուդիտ): Ընկերության արտաքին աուդիտի հրավիրման որոշման կայացումը և Ընդհանուր Ժողովին արտաքին աուդիտ իրականացնող անձի ընտրության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն իրականացվում է Տնօրենների Խորհրդի կողմից, իսկ արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վարձատրության որոշման ընդունումը՝ Ընդհանուր ժողովի կողմից:

14.12. Ցանկացած ժամանակ Ընկերության արտաքին աուդիտ կարող է հրավիրվել Ընկերության Տնօրենների Խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին, կամ Ընկերության մասնակցի նախաձեռնությամբ՝ նրա միջոցների հաշվին: Ընդ որում, Ընկերության մասնակցի կամ պահառուի կողմից արտաքին աուդիտ հրավիրվելու դեպքում «Ներդրումային ֆոնդերի մասին մասին» ՀՀ օրենքին համապատասխան արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում և նրա հետ պայմանագիր է կնքում արտաքին աուդիտ պահանջող մասնակիցը (պահառուն), որը կարող է Ընկերությունից պահանջել իր կատարած ծախսերի հատուցում ֆոնդի միջոցների հաշվին, եթե Ընկերության Տնօրենների Խորհրդի որոշմամբ այդ աուդիտն արդարացված է եղել Ընկերության համար:

14.13. Արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելուց, պետք է նախատեսվի նաև աուդիտորական հաշվետվություն (նամակ կառավարչի ղեկավարությանը) կազմելը: Աուդիտորական եզրակացությունը պետք է ներկայացվի ընկերության ներքին հսկողության համակարգին, ինչպես նաև «Ներդրումային ֆոնդերի մասին մասին» ՀՀ օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան:

14.14. Աուդիտ իրականացնող անձն ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Ընկերության Տնօրենների Խորհրդին:

14.15. Արտաքին աուդիտն իրականացնող անձի տարեկան եզրակացությունը և հաշվետվությունը Ընկերությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի «Ներդրումային ֆոնդերի մասին մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում:

14.16. Ընկերությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ: Հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, դրանց

ներկայացման և հրապարակման կարգը, ժամկետներն ու պարբերականությունը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և կազմվում են «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

14.17. Ընկերության Ընդհանուր Ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության արտաքին աուդիտորի եզրակացությամբ:

14.18. Ընկերության շահերը վտանգվելու կամ պաշտոնատար անձանց թույլ տրված չարաշահումներ հայտնաբերելու դեպքում աուդիտ իրականացնող անձն իրավունք ունի պահանջելու արտահերթ Տնօրենների Խորհրդի նիստի անցկացում:

14.19. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

15.1. Իր գտնվելու վայրից դուրս գործունեություն ծավալելու և իր շահերը ներկայացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

15.2. Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

16.1. Ընկերության վերակազմակերպումը կարող է կատարվել բացառապես մեկ այլ կառավարիչի հետ միանալու կամ վերակազմավորման միջոցով:

16.2. Ընկերության վերակազմավորման դեպքում նորաստեղծ իրավաբանական անձին են փոխանցվում վերակազմավորման միջոցով վերակազմակերպված ընկերության իրավունքները և պարտականությունները, որոնք սահմանվում են փոխանցման ակտին համապատասխան:

Ընկերությունը կարող է միանալ մեկ այլ կառավարչի միայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալուց հետո:

Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

16.3. Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

16.4. Ընկերությունը լուծարվում է՝

16.4.1. Ընկերության Ընդհանուր Ժողովի որոշմամբ (ինքնալուծարում),

16.4.2. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում,

16.4.3. Ընկերության սնանկության դեպքում,

16.4.4. Օրենքով նախատեսված այլ հիմքերով:

16.5. Ընկերությունը կարող է Ընդհանուր Ժողովի որոշմամբ լուծարվել միայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալուց հետո:

16.6. Ընկերության լուծարումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

16.7. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, այդ մասին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցումների մատյանում Ընկերությանը գրանցումից հանելու մասին գրառում կատարելու պահից:

17. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1. Անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հետևանքով նյութական կորուստներ ունենալու դեպքում հրավիրվում է Ընկերության Արտահերթ Ընդհանուր Ժողով՝ իրադրությունը քննարկելու և յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար:

17.2. Սույն Կանոնադրությամբ չպարզաբանված հարցերը լուծվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, ՀՀ միջազգային պայմանագրերին և գործող այլ իրավական ակտերին համապատասխան: